ԿԱԿԱԼԻ ՁՈՐԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԻՐԵՐ

Կակալի ձորի հուշարձանը, որը գտնվում է Ալավերդի քաղաքից 15 կմ հարավ-արևելք՝ Հաղպատ-Ծաղկաշատ հատվածում, բացվել է 1982 թ. նոյեմբերին ճանապարհաշինական աշխատանքների ժամանակ։ Դժբախտաբար, այն ավերվել էր, բայց մենք կարողացանք հայտնաբերված նյութերի մի մասը միայն հավաքել և պահ տալ Շնողի միջնակարգ դպրոցի հայրենագիտական թանգարանին։ Դամբարանների խումբը, որոնց թիվը պարզել հնարավոր չեղավ, քարարկղային տիպի են և գտնվում են անտառապատ մի փոքրիկ թեք բացատում։ Դրանցից գտնված իրերի մեջ կան 14 կավամաններ, բրոնզե իրեր, զարդեր, ագաթից և սարդիոնից ուլունքներ, մարդու կմախքի և կենդանիների ոսկորների մնացորդներ։

Կավանոթները բաժանվում են երեք խմբի.

Կճուճներ, *որոնք երկարավիզ են, փոքր բերաններով, դեպի ետ դարձած շրթերով կամ էլ՝ կարճ վզով ու լայնաբերան։ Կճուճների մի մասն օգտագործվել է հեղուկ նյութերի համար։ Դրանք ունեն երկուական կանթ, երկարավիզ են ու փոքր բերաններով։ Իսկ լայնաբերան կճուճներն օգտագործվել են ուտելիք պատրաստելու (եփելու) համար, դրանց մի մասը մրապատ է։*

Գավաթներ. *սրանք ցածր իրանով են և լայնաբերան. հավանաբար, օգտագործվել են սննդի համար։*

Բաժականման անկանթ և կանթավոր անոթներ, *որոնք հեղուկ նյութեր ընդունելու համար են։*

Կավանոթներից առավել աչքի է ընկնում լայնաբերան կճուճը, որն ունի ուռուցիկ իրան, կարճ վիզ և պատրաստված է բրուտագործական դուրգի վրա։ Սրա հավասար հեռավորությունների վրա ամրացված վերադիր չորս կանթերից ցած կան երեք փորագիր գծեր, որոնք առանձնակի գեղեցկություն են հաղորդում անոթին։ Կճուճն արտաքնապես նման է Սանահինից հայտնաբերված ռելիեֆ օձապատկերներով անոթին[1]։ Այս և մյուս կավանոթները մեծ մասամբ սև փայլաներկով են, որը ևս հիմք է տալիս դրանք ստույգ թվագրելու (XI դ. մ. թ. ա.)։

Հաջորդ իրը բիկոնիկ ձևի, միջին մեծության, սև փայլաներկով երկկանթանի կճուճն է (նկ. 1, վերևից ձախը)։ Կանթերն արված են իրանի ուռուցիկ գոտում. սրա սահմանով ընդլայնակի անցնում է մի ակոսագիծ։ Կճուճն ունի նեղ վիզ, փոքր-ինչ ետ փռված բերան, որի շուրթերը բարակ են ու լավ մշակված։

Ուշագրավ է կանթավոր բաժակը, որը արտաքուստ երեք անցումներով, բարձր հատակով երկձագարաձև անոթ է։ Կանթն իրանագոտին կամրջում է ետ փռված շուրթին (նկ. 1, ներքևից ձախը)։

Կակալի ձորից հայտնաբերված մյուս կավանոթը լայնաբերան, սև փայլաներկով, ոչ խորը գավաթն է, որը իրանագոտուց ցած ունի 11 հատ մեկ սմ լայնությամբ հպազարդեր։ Այն չափազանց նուրբ է ու պատրաստված է բարձր ճաշակով (նկ. 2, աջ կողմինը)։ Վերոհիշյալ կավանոթներն իրենց զուգահեռներն ունեն Լոռու, Հայաստանի և ընդհանրապես Անդրկովկասի ուշբրոնզեդարյան նյութերի մեջ։

Կավանոթների հետ գտնվել են նաև բրոնզե մեծ նիզակ և դաշույն (նկ. 2, ցածում)։ Նիզակը քառակող է, երկարությունը 29 սմ, լայնությունը՝ 2 սմ։ Պատրաստված է կռման եղանակով։ Նիզակի այս ձևը նույնպես լայնորեն տարածված է ուշ բրոնզեդարյան նյութերի շարքում։ Դաշույնի դաստակը շեղբի հետ միաձույլ է։ Դաստակի կիսագնդաձև գլխիկի վրա արված են սֆերիկ եռանկյունաձև ծակոտկենազարդեր, որոնք շրջանաձև դասավորված են գագաթն ամփոփող խաչի շուրջը։ Դրանք առանձնակի գեղեցկություն են հաղորդում դաստակին։ Դաշույնը պատրաստված է բրոնզե կլոր ձողից, կռման եղանակով։ Շեղբը եռանկյունաձև է և նման է Արթիկից[2], Լճաշենից[3], Դիլիջանից[4] և Հայաս-

---

[1] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 140, рис. 58.

[2] Т. С. Хачатрян, Материальная культура Древнего Артика. Ереван, 1963, с 49, табл. II, рис. 3.

[3] Վ. Վ. Ավետյան, *Ուշ բրոնզեդարյան տնտեսության հիմնական ձևերը Սևանի ավազանում (թեկն. դիսերտացիա), Երևան, 1968, էջ 129։*

[4] А. А. Мартиросян, *նշվ. աշխ. աղ. XXXV, նկ. 9։*



Նկ. 1։



Նկ. 2։

տանի այլ հնավայրերից հայտնաբերվածներին, որոնք թվագրվում են XIII—XI դդ. մ. թ. ա.։

Քարաբերդերից մեկում, կավանոթների հետ միասին, եղել են նաև այլ նյութեր, որոնց մի մասը, ցավոք, մեզ չհաջողվեց գտնել՝ հողի հետ խառնվելու պատճառով։ Հայտնաբերվածներից, թերևս, ամենաաչքի ընկնողներն են բարակ բրոնզե թիթեղից, 2 սմ տրամագծով մատանին և ապարանջանը։ Վերջինս ունի 7 սմ տրամագիծ, 1,5 սմ լայնություն, ծայրերը փոքր-ինչ նեղացված են և ետ դարձված։ Մակերեսին սուր փորագրիչով արված են իրար մեջ հագած կամ կրկնագծերով փակված եռանկյունիներ (նկ. 3)։

Կակաչի ձևի դամբարանային նյութերի մեջ ամենաուշագրավը գոտին է։ Այն պատրաստված է 2 մմ հաստությամբ բրոնզե թիթեղից։ Պահպանվել է երկու բեկոր՝ 45 սմ ընդհանուր երկարությամբ։ Բաղդատելով համանման գոտիների հետ, պետք է ենթադրել, որ նրա երկարությունը եղել է 60—65 սմ։ Գոտու եզրերում երկու շարքով ընդերկայնակի ձգվող բարակ ակոսագծերի միջև փորագրված են արմնկաձև կամ եղնաձև գծազարդեր։ Եզրագծերի միջև, գոտու դաշտում, պատկերված են կանգնած վայրի այծ, առյուծ, թռչուն, եղջերու և սվաստիկա (նկ. 4)։ Կենդանիների մարմինները պատված են բարակ



Նկ. 3։

Նկ. 4։

գոտիներ ներկայացնող շարիխներով։ Պատկերները իրարից բաժանվում են գոտու եզրաղարդերից սկիզբ առնող և զգաթներով իրար դարձած չորս զույգ եռանկյունիներով։ Կենդանիները նկարված են մեկ շարքով՝ հավասար մեծությամբ ու հեռավորությամբ, կարծես բոլորն էլ նայում են վերջին պատկերին՝ սվաստիկային։ Ձախից առաջինը վայրի այծ է, զգաստ կանգնած, գլուխը բարձր՝ զույգ երկար եղջյուրները կորաձև դեպի մեջքը ետ դարձած, որոնց երկարությունը մարմնի կեսի չափ է։ Եղջյուրների խորդուբորդությունների փոխարեն, կորությանը թեք, արված են կարճ շորիխներ։ Այծի դունչը տափակ է։ Երկրորդ պատկերն առյուծն է, հանգիստ ու հաղթական ձևով կանգնած, կիսաբաց երախից դուրս է ցցված ինչ-որ բարակ իր (գուցե լեզուն է), պոչը երկար է և ծայրը դեպի վեր կծկած։ Երրորդը՝ Թռչնի պատկեր է, թվում է, թե նոր իջել ու կանգնել է ոտքերը ձգած։ Չորրորդը եղջերու է, դարձյալ կանգնած վիճակում, զույգ բազմաճյուղ եղջյուրները փոքր-ինչ ետ դարձած, իսկ դունչը՝ բարձր։ Հինգերորդ նկարը ծայրերը եռանկյունապատկեր խաչ-սվաստիկա է։ Ըստ երևույթին, այն արևի, լույսի, հավերժության սիմվոլն է, որին ձգտում են գոտու վրա պատկերված կենդանիները։ Վերջիններիս պատկերման ոճը միանգամայն նման է Հրաղդանի շրջանի Բշնի գյուղից հայտնաբերված գոտու պատկերներին[5]։ Ի դեպ, գոտու չափերը նույնպես համընկնում է Բշնիի գոտուն։ Համանման ոճապատկերներով բրոնզե գոտիներ են հայտնի Թալինից, Կարմիր բերդից, Ստեփանավանից և այլ վայրերից[6]։

Կենդանիների պատկերման ոճը նման է Թրումանյանի շրջանի Օձունից և Լորուտից գտնված գոտիների կենդանիների պատկերման ոճին[7], որոնք թվագրվում են մ. թ. ա. II հազարամյակի վերջով և I հազարամյակի սկզբով։ Ընդհանրապես գոտիների այսօրինակ զարդերը բնորոշ են Անդրկովկասի տարբեր վայրերից հայտնաբերված շատ գոտիների համար՝ Սամթավրո[8], Թրելի[9]։ Գոտին, հավանաբար, ունեցել է պաշտամունքային նշանակություն, պատկանել է անասնապահ տեղաբնակ ցեղերից մեկին և ունի տեղական ծագում։ Այն է՛լ ավելի է հարստացնում մեր պատկերացումները Լոռու մշակութային ռեգիոնի ունեցած դերի մասին՝ ուշ բրոնզեդարյան մշակույթի զարգացման գործում։

ՎԱՐՇԱՄ ԱՎԵՏՅԱՆ

---

[5] Варшам Аветян, Леонид Биагов, Новые находки бронзовых поясов (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1977, № 2, էջ 87—89).

[6] А. А. Мартиросян, նշվ. աշխ., նկ. 55։

[7] Վ. Ավետյան, Հին հուշարձաններ Լորուտի տարածքում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, № 8, էջ 113—116), Ս. Ա. Եսայան, Վ. Վ. Ավետյան, Լոռվում հայտնաբերված բրոնզե գոտիներ («Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4, էջ 314—317)։

[8] Н. Урушадзе, Бронзовые пояса из Мцхети. Самтавро («Декоративное искусство СССР», 1977, № 6, с. 47—48).

[9] Н. Абрамишвили, Бронзовый пояс из Трельского могильника («Друзья памятников культуры», № 39, Тбилиси, 1975, с. 22).